

Լեւոնի մայրն ու կինն առժամաբար մնացին Կոռիկոսի մէջ ապահով տեղ մը :

Վերջապէս երկու ցորեկ եւ երկու գիշեր ծովեզերքէն դէպի ներս ձիով ճանրորդելէ ետքը՝ Լեւոն իր քսանհինգ զինակիրներով ու երկու առաջնորդներով հասաւ Սսի մօտերը :

Տարակոյս չկայ թէ Լեւոնի սիրտն ուժով կը զարնէր նոյն օրը : Մէկ կողմէ Սիս մանելու ուրախութիւնը, իսկ միւս կողմէ անհաւատներու ձեռքը գերի իյնալու վախը զօրաւոր կերպով ազգած էին անոր վրայ :

Երեք փարսախի միջոց կար միայն իր (Լեւոնի) եւ Սսի միջեւ :

Թշնամի բանակը ժամանակաւորապէս հեռացած էր մայրաքաղաքին պարիսպներէն :

Այլ եւս չկրցաւ համբերել Լեւոն, եւ երկու ձիաւոր զրկելով Սիս՝ իմաց տուաւ իր գալուստը :

Իշխաններէն սկսած մինչեւ յետին ոսմիկը — քանի մը բացառութիւններէ զատ — ուրախութեան մէջ էր Հայաստան՝ լսելով իր թագաւորին հասնիլը . վասն զի բոլորն ալ տիրող անիշխանութենէն զզուած էին այլ եւս : Այս ճշնամամային վիճակէն ազատուելու վերջին յոյսն էր Լեւոն : Ուստի՝ ամբողջ քաղաքն ոտքի ելաւ անմիջապէս եւ պատրաստութիւններ տեսաւ Լեւոնը դիմաւորելու համար :

Ժամանակին կաթողիկոսը, Պօղոս Ա. (1374-1377), շրջապատուած եկեղեցականներէ, պալատականներէ, զինուորականներէ ու ժողովրդեան ամէն դասակարգի բազմութենէ մը, — որոնք խաչերով, խաչվառներով, ջահերով, բուրվառներով ու պէս պէս նուագարաններով կը հետեւէին իրենց կաթողիկոսին, — գնաց հրաւիրեց Լեւոնը. եւ՝ նոյն եւ աւելի շքով, եկեղեցիներու խաչուցիչ զանգահարութիւններու տակ ու շարականներու երգեցողութիւններով մօտէն քաղաք (26 յուլիսի 1374) :

Երեք օրուան հանգստէ ետքը՝ չորրորդ օրը Լեւոն մարդ զրկեց եւ քովը բերել տուաւ իր կինն ու մայրը, ազատելով զանոնք իրենց թաքստոցէն :

Այսպէս բոլորը միացած Սսի մէջ՝ անհամբեր կոպտէին Մարգարիտ իշխանուհին ծննդաբերութեան, որովհետեւ Սիս մտած օրն (6 օգոստոս) ութամեայ յղի էր Մարգարիտ . այս պատճառով ալ ամիս մը ետ մնաց թագազրութեան հանգիստաւոր արարողութիւնը :

Լեւոն անգործ չմնաց սակայն :

Նախ՝ Հայաստանի վիճակին վրայ խորհրդակցութիւններ կատարեց կաթողիկոսին ու իշխաններուն հետ, ծրագիրներ կազմեց, որոշումներ